



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հունիսին /վերլուծություն/

2006թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 11120 գործարքներ, որոնց քանակը 2006թ. մայիսի համեմատ աճել է 4.4%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 10.9%-ով:

2006թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4563 օտարման գործարքների 87.8% կազմել են առուվաճառքները, 11.3%-ը՝ նվիրատվությունները և

0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. հունիսին, 2006թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 0.9%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ աճել 26.6%-ով: 2006թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. մայիսի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.0%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 27.3%-ով:

2006թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2006թ. հունիսին համարժեք է 420.8դրամին/

| Համայնքներ                          | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունիսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ |               |               |
|-------------------------------------|--|--------------------|---------------|---------------|
|                                     |  | հունիս 2005թ.      | հունիս 2006թ. | մայիս 2006թ.  |
| Կենտրոն                             | 157500-540100  | 279300             | 368100        | 368100        |
| Արաբկիր                             | 112500-405100  | 233500             | 291200        | 291200        |
| Քանաքեռ-Զեյթուն                     | 90000-270100   | 142700             | 175500        | 175500        |
| Նոր-Նորք                            | 90000-225100   | 134700             | 164900        | 164900        |
| Ավան                                | 99000-180000   | 122900             | 146600        | 146600        |
| Էրեբունի                            | 90000-225100   | 118000             | 144700        | 144700        |
| Շենգավիթ                            | 90000-202500   | 141800             | 173400        | 173400        |
| Դավթաշեն                            | 97700-225100   | 142200             | 180900        | 180900        |
| Աջափնյակ                            | 90000-225100   | 138700             | 164600        | 164600        |
| Մալաթիա-Սեբաստիա                    | 90000-202500   | 133800             | 161500        | 161500        |
| Նուբարաշեն                          | 58500-135000   | 73600              | 108700        | 105700        |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | <b>58500-540100</b>                                    | <b>151000</b>      | <b>189100</b> | <b>188800</b> |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների էական փոփոխություն չի գրանցվել:

2006թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 461 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. մայիսի համեմատ աճել է 0.2%-ով, իսկ 2005թ. հունիսի համեմատ՝ 21.3%-ով:

2006թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունիսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ |               |              |
|--------|----------|--|--------------------|---------------|--------------|
|        |          |  | հունիս 2005թ.      | հունիս 2006թ. | մայիս 2006թ. |

|             |             |              |       |       |       |
|-------------|-------------|--------------|-------|-------|-------|
| Արագածոտն   | Աշտարակ     | 36000-75500  | 45300 | 60200 | 60200 |
|             | Ապարան      | 13500-39500  | 21000 | 25900 | 25900 |
|             | Թալին       | 11300-42200  | 20500 | 23200 | 23200 |
| Արարատ      | Արտաշատ     | 24800-66600  | 34800 | 45400 | 45400 |
|             | Մասիս       | 36000-71100  | 41100 | 53900 | 53900 |
|             | Վեդի        | 22500-46600  | 20500 | 37200 | 37200 |
|             | Արարատ      | 20300-53300  | 26100 | 39400 | 39400 |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 49500-111000 | 69200 | 78700 | 78700 |
|             | Արմավիր     | 27000-66600  | 41100 | 52400 | 52400 |
|             | Մեծամոր     | 18000-48900  | 22000 | 33500 | 33500 |
| Գեղարքունիք | Սևան        | 18000-44400  | 23100 | 32600 | 32600 |
|             | Գավառ       | 13500-40000  | 18800 | 24800 | 24800 |
|             | Մարտունի    | 22500-67500  | 22900 | 38600 | 38600 |
|             | Վարդենիս    | 9000-37800   | 11000 | 20300 | 20300 |
|             | Ճամբարակ    | 5900-31100   | 9200  | 13200 | 13200 |
| Լոռի        | Վանաձոր     | 27000-88800  | 36000 | 47000 | 47000 |
|             | Ստեփանավան  | 15800-42200  | 21100 | 24100 | 24100 |
|             | Սյիտակ      | 18000-48900  | 23100 | 32700 | 32700 |
|             | Այվերդի     | 9000-35500   | 16500 | 20400 | 20400 |
|             | Տաշիր       | 11300-33300  | 19200 | 19400 | 19400 |
|             | Թումանյան   | 4100-11300   | 5200  | 5100  | 5100  |
|             | Շամլուղ     | 2300-8300    | 2700  | 2700  | 2700  |
|             | Ախթալա      | 6800-16000   | 10200 | 10100 | 10100 |
| Կոտայք      | Արովյան     | 57700-111000 | 67400 | 89000 | 89000 |
|             | Նոր Հաճն    | 40500-75500  | 45700 | 60100 | 60100 |
|             | Բյուրեղավան | 22500-57700  | 33000 | 42600 | 42600 |
|             | Եղվարդ      | 31500-66600  | 40100 | 55600 | 55600 |
|             | Հրազդան     | 20300-48900  | 27300 | 34700 | 34700 |
|             | Ծաղկաձոր    | 18000-88800  | 52400 | 71100 | 70500 |
|             | Չարենցավան  | 24800-48900  | 29400 | 38900 | 38900 |
| Շիրակ       | Գյումրի     | 27000-88800  | 39200 | 46300 | 46300 |
|             | Արթիկ       | 15800-42200  | 20200 | 29700 | 29700 |
|             | Մարալիկ     | 8100-35500   | 15800 | 21100 | 21100 |
| Սյունիք     | Գորիս       | 22200-66600  | 34800 | 51700 | 51700 |
|             | Կապան       | 22500-46600  | 26800 | 39500 | 39500 |
|             | Սիսիան      | 18000-48900  | 24000 | 32600 | 32400 |
|             | Մեղրի       | 13500-42200  | 20100 | 26500 | 26400 |
|             | Ագարակ      | 9000-31100   | 17100 | 19500 | 19500 |
|             | Քաջարան     | 9000-40000   | 12300 | 24400 | 24400 |
|             | Դաստակերտ   | 4500-11300   | 6300  | 6200  | 6200  |
| Վայոց Ձոր   | Վայք        | 13500-48900  | 23300 | 33900 | 33700 |
|             | Եղեգնաձոր   | 24800-66600  | 35200 | 52200 | 52200 |
|             | Ջերմուկ     | 36000-88800  | 38500 | 59600 | 59600 |
| Տավուշ      | Դիլիջան     | 18000-57700  | 30300 | 41500 | 41500 |
|             | Իջևան       | 27000-72000  | 34000 | 49100 | 49100 |
|             | Բերդ        | 18000-45000  | 24600 | 29700 | 29700 |
|             | Նոյեմբերյան | 9000-22500   | 12500 | 16100 | 16100 |

2006թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գների էական փոփոխություն չի գրանցվել:

2006թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 438 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 104, մյուս մարզերում

միասին վերցրած՝ 334: 2006թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 4.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 7.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել 7.5%-ով: 2005թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 14.1%-ով, ընդ որում Երևանում նվազել է 24.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 35.8%-ով:

2006թ. հունիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

| Համայնքներ                        | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունիսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ |               |               |
|-----------------------------------|--|--------------------|---------------|---------------|
|                                   |  | հունիս 2005թ.      | հունիս 2006թ. | մայիս 2006թ.  |
| Կենտրոն                           | 135000-900200  | 307400             | 383300        | 383300        |
| Արաբկիր                           | 90000-450100   | 246700             | 296300        | 296300        |
| Քանաքեռ-Զեյթուն                   | 67500-270100   | 147100             | 178900        | 178900        |
| Նորք-Մարաշ                        | 90000-450100   | 174300             | 185000        | 185000        |
| Ավան                              | 90000-360100   | 127300             | 148800        | 148800        |
| Էրեբունի                          | 67500-225100   | 120600             | 147500        | 147500        |
| Շենգավիթ                          | 67500-202500   | 143800             | 175200        | 175200        |
| Դավթաշեն                          | 90000-405100   | 150400             | 183300        | 183300        |
| Աջափնյակ                          | 67500-270100   | 144000             | 167000        | 167000        |
| Մալաթիա-Սեբաստիա                  | 67500-405100   | 139900             | 164400        | 164400        |
| Նուբարաշեն                        | 40500-135000   | 75700              | 110200        | 106700        |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | <b>40500-900200</b>                                    | <b>161600</b>      | <b>194500</b> | <b>194200</b> |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ էական փոփոխություն չի գրանցվել:

2006թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր    | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունիսին /դրամ/ | Միջին գները /դրամ/ |               |              |
|-----------|----------|--|--------------------|---------------|--------------|
|           |          |  | հունիս 2005թ.      | հունիս 2006թ. | մայիս 2006թ. |
| Արագածոտն | Աշտարակ  | 27000-81000  | 47400              | 64200         | 64200        |
|           | Մայրան   | 13500-36000  | 21800              | 27700         | 27300        |
|           | Թային    | 13500-36000  | 21900              | 24500         | 24500        |
| Արարատ    | Արտաշատ  | 22500-62200  | 36100              | 46600         | 46600        |

|             |             |              |       |       |       |
|-------------|-------------|--------------|-------|-------|-------|
|             | Մասիս       | 25000-62200  | 42100 | 55000 | 55000 |
|             | Վեդի        | 22500-48900  | 22800 | 38500 | 38500 |
|             | Արարատ      | 22500-53300  | 27500 | 40700 | 40700 |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 36000-111000 | 70200 | 80000 | 80000 |
|             | Արմավիր     | 22500-67500  | 42100 | 53900 | 53900 |
| Գեղարքունիք | Սևան        | 18000-53300  | 24000 | 37300 | 37300 |
|             | Գավառ       | 9000-37800   | 19800 | 26100 | 26100 |
|             | Մարտունի    | 22200-53300  | 23900 | 39800 | 39800 |
|             | Վարդենիս    | 9000-31500   | 12500 | 21700 | 21700 |
|             | Ճամբարակ    | 4500-24400   | 10900 | 14600 | 14600 |
| Լոռի        | Վանաձոր     | 23200-92800  | 37500 | 48300 | 48300 |
|             | Ստեփանավան  | 13500-40000  | 26400 | 26200 | 26200 |
|             | Մայիսակ     | 17800-44400  | 24000 | 34000 | 34000 |
|             | Այվերդի     | 9000-31500   | 17600 | 21900 | 21900 |
|             | Տաշիր       | 9000-31500   | 20500 | 20900 | 20900 |
|             | Թումանյան   | 4500-18000   | 6500  | 6700  | 6700  |
|             | Շամլուղ     | 2300-13500   | 4100  | 4200  | 4200  |
|             | Ախթալա      | 9000-22500   | 11200 | 11600 | 11600 |
| Կոտայք      | Աբովյան     | 31500-111000 | 68400 | 91000 | 91000 |
|             | Նոր Հաճն    | 22200-76500  | 46600 | 61300 | 61300 |
|             | Բյուրեղավան | 22200-66600  | 33900 | 43800 | 43800 |
|             | Եղվարդ      | 22500-71100  | 41400 | 56700 | 56700 |
|             | Հրազդան     | 18000-53300  | 28900 | 36200 | 36200 |
|             | Ծաղկաձոր    | 36000-112500 | 54900 | 72400 | 72200 |
|             | Չարենցավան  | 18000-57700  | 30400 | 39900 | 39900 |
| Շիրակ       | Գյումրի     | 28200-93800  | 43000 | 47900 | 47900 |
|             | Արթիկ       | 13300-40500  | 21200 | 30800 | 30800 |
|             | Մարալիկ     | 13500-40000  | 16700 | 22900 | 22900 |
| Սյունիք     | Գորիս       | 18000-79900  | 35700 | 52900 | 52900 |
|             | Կապան       | 17800-66600  | 27700 | 40600 | 40600 |
|             | Միսիան      | 17800-44400  | 25100 | 33600 | 33500 |
|             | Մեղրի       | 13500-40000  | 21000 | 27500 | 27500 |
|             | Ագարակ      | 13300-36000  | 18100 | 21000 | 21000 |
|             | Դաստակերտ   | 4500-18000   | 7500  | 8500  | 8500  |
| Վայոց Ձոր   | Վայք        | 17800-44400  | 24200 | 35000 | 35000 |
|             | Եղեգնաձոր   | 22200-71100  | 36500 | 54000 | 54000 |
|             | Ջերմուկ     | 17800-48900  | 28600 | 35700 | 35700 |
| Տավուշ      | Դիլիջան     | 26600-66600  | 32800 | 42500 | 42500 |
|             | Իջևան       | 22200-66600  | 34500 | 50400 | 50400 |
|             | Բերդ        | 13500-44400  | 25500 | 31100 | 31100 |
|             | Նոյեմբերյան | 9000-31500   | 14000 | 17100 | 17100 |

2006թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ էական փոփոխություն չի գրանցվել:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1781 միավոր /4329.26 հա/ հողեր, որից Երևանում` 210 միավոր /54.37 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 97 միավոր /33.41 հա/ հողեր, որից Երևանում` 68 միավոր /30.90 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 825 միավոր /4202.49 հա/: Երևանում գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 606 միավոր /61.34 հա/, որից Երևանում՝ 135 միավոր /17.44 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 313 միավոր /40.82 հա/, որից Երևանում՝ 61 միավոր /17.69 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 30 միավոր /22.40 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /19.23 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 7 միավոր /2.22 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1693 միավորի /4282.78 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 200 միավոր /53.52 հա/, նվիրատվության գործարքներ՝ 82 միավոր /44.97 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.76 հա/ և փոխանակության գործարքներ՝ 6 միավոր /1.51 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.09 հա/:

Հանրապետությունում 2006թ. հունիսին, 2005թ. հունիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 46.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 14.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 85.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 4.1 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 7 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3193.06 հա, որից 3187.52 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 41.8%-ը կամ 707 գործարքներ /2679.14 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 76 միավոր /32.83 հա/, իսկ 58.2%-ը կամ 986 միավորը /1603.64 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 124 միավոր /20.69 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների հողերը.

| ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ | <i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i> |               |                                  |               |  |               |                                  |               | <i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i> |               |                                  |               |  |               |                                  |               |
|----------------|--|---------------|----------------------------------|---------------|--|---------------|----------------------------------|---------------|---|---------------|----------------------------------|---------------|--|---------------|----------------------------------|---------------|
|                | Գյուղատնտեսական նշանակության հողերի                    |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                     |               |                                  |               | Գյուղատնտեսական նշանակության հողերի       |               | Արդյունաբերական օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                     |               |                                  |               |
|                |  |               |                                  |               | բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատման հողերի |               |   |               |                                  |               | բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատման հողերի |               |
|                | Միավոր   | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                                 | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                                    | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ | Միավոր                                 | Մակերեսը /հա/ | Միավոր                           | Մակերեսը /հա/ |
| Երևան          | 0  | 0.00          | 13                               | 19.16         | 23                                     | 2.63          | 40                               | 11.05         | 0   | 0.00          | 0                                | 0.00          | 103                                    | 14.04         | 21                               | 6.64          |
| Արագածոտն      | 74   | 473.52        | 0                                | 0.00          | 10                                     | 1.21          | 16                               | 0.34          | 36  | 90.06         | 3                                | 0.07          | 49                                     | 6.01          | 6                                | 2.21          |
| Արարատ         | 32   | 71.06         | 3                                | 0.32          | 30                                     | 3.10          | 26                               | 1.03          | 95  | 38.82         | 1                                | 0.30          | 72                                     | 6.08          | 1                                | 0.005         |
| Արմավիր        | 136  | 1899.50       | 0                                | 0.00          | 0                                      | 0.00          | 23                               | 0.25          | 127                                       | 1288.02       | 0                                | 0.00          | 48                                     | 4.13          | 16                               | 1.15          |
| Գեղարքունիք    | 0  | 0.00          | 1                                | 0.20          | 12                                     | 2.00          | 11                               | 1.37          | 3   | 2.00          | 0                                | 0.00          | 5                                      | 0.51          | 4                                | 1.07          |
| Լոռի           | 5  | 11.00         | 0                                | 0.00          | 0                                      | 0.00          | 10                               | 0.70          | 13  | 11.04         | 0                                | 0.00          | 4                                      | 0.45          | 2                                | 0.01          |
| Կոտայք         | 51   | 152.02        | 6                                | 2.15          | 13                                     | 1.13          | 70                               | 13.40         | 112                                       | 40.98         | 1                                | 0.07          | 150                                    | 15.16         | 3                                | 0.05          |

|           |     |         |    |       |     |       |     |       |     |         |   |      |     |       |    |        |
|-----------|-----|---------|----|-------|-----|-------|-----|-------|-----|---------|---|------|-----|-------|----|--------|
| Շիրակ     | 2   | 4.18    | 0  | 0.00  | 32  | 1.07  | 28  | 0.46  | 11  | 9.45    | 0 | 0.00 | 3   | 0.11  | 3  | 0.03   |
| Սյունիք   | 0   | 0.00    | 0  | 0.00  | 0   | 0.00  | 3   | 0.01  | 9   | 14.54   | 0 | 0.00 | 2   | 0.11  | 6  | 0.10   |
| Վայոց Ձոր | 5   | 3.45    | 1  | 0.05  | 0   | 0.00  | 22  | 0.76  | 23  | 34.04   | 0 | 0.00 | 3   | 0.61  | 1  | 0.01   |
| Տավուշ    | 6   | 1.50    | 0  | 0.00  | 0   | 0.00  | 3   | 0.35  | 35  | 14.06   | 0 | 0.00 | 8   | 0.69  | 0  | 0.00   |
| Ընդամենը  | 311 | 2616.23 | 24 | 21.88 | 120 | 11.14 | 252 | 29.72 | 464 | 1543.01 | 5 | 0.44 | 447 | 47.90 | 63 | 11.275 |

Ստորև ներկայացվում է 2006թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների հողերի.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ուղղակի վաճառք |               |                             |               |                                    |               |                              |               | Աճուրդ վաճառք |               |                            |               |                             |               |                                    |               |                              |               |
|-----------------|----------------|---------------|-----------------------------|---------------|------------------------------------|---------------|------------------------------|---------------|---------------|---------------|----------------------------|---------------|-----------------------------|---------------|------------------------------------|---------------|------------------------------|---------------|
|                 | Ընդամենը       |               | Արդյունաբ. օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                 |               |                              |               | Ընդամենը      |               | Գյուղ. նշանակության հողերի |               | Արդյունաբ. օբյեկտների հողեր |               | Բնակավայրերի հողեր                 |               |                              |               |
|                 |                |               |                             |               | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապ. հողերի |               |               |               |                            |               |                             |               | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապ. հողերի |               |
|                 | Միավոր         | Մակերեսը /հա/ | Միավոր                      | Մակերեսը /հա/ | Միավոր                             | Մակերեսը /հա/ | Միավոր                       | Մակերեսը /հա/ | Միավոր        | Մակերեսը /հա/ | Միավոր                     | Մակերեսը /հա/ | Միավոր                      | Մակերեսը /հա/ | Միավոր                             | Մակերեսը /հա/ | Միավոր                       | Մակերեսը /հա/ |
| Երևան           | 76             | 32.84         | 13                          | 19.16         | 18                                 | 1.82          | 37                           | 9.93          | 8             | 1.94          | 0                          | 0.00          | 0                           | 0.00          | 5                                  | 0.81          | 3                            | 1.13          |
| Արագածոտն       | 2              | 0.01          | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 2                            | 0.01          | 98            | 475.06        | 74                         | 473.52        | 0                           | 0.00          | 10                                 | 1.21          | 14                           | 0.33          |
| Արարատ          | 13             | 0.56          | 3                           | 0.32          | 0                                  | 0.00          | 10                           | 0.24          | 78            | 74.96         | 32                         | 71.06         | 0                           | 0.00          | 30                                 | 3.10          | 16                           | 0.80          |
| Արմավիր         | 0              | 0.00          | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 0                            | 0.00          | 159           | 1899.75       | 136                        | 1899.50       | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 23                           | 0.25          |
| Գեղարքունիք     | 2              | 1.01          | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 2                            | 1.01          | 22            | 2.56          | 0                          | 0.00          | 1                           | 0.20          | 12                                 | 2.00          | 9                            | 0.36          |
| Լոռի            | 3              | 0.33          | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 6                            | 0.37          | 9             | 11.32         | 5                          | 11.00         | 0                           | 0.00          | 0                                  | 0.00          | 4                            | 0.32          |
